Բաժանորդների թվի մասին մոտավոր գաղափար կարող են տալ հետևյալ տվյալները. 1891, 1900, 1901, 1902 թթ., հաշորդաբար, բաժանորդների թիվը կազմել է՝ 307, 245, 657 և 653. Այս թվերը վկայում են, թե նյութական ինչպիսի զրկանքների գնով պետք է ամսագրի խմբագիրները պահպանած լինեին նրա գոյությունը, եթե, ինչպես Արասխանյանն էր հաշվարկել, առանց դեֆիցիտի աշխատելու համար պահանջվում էր առնվազն 1000 բաժանորդ։ «Մուրճի» գրաքննիչներ են եղել Կարախանովը (1889, 1891, 1901—1904), Մեհրաբովը (1890), Փիշմիշևը (1892—1896, 1899—1900)։

Հաղթահարելով գրաքննական ու նյութական կարգի շատ դժվարություններ, «Մուրճը» ապրեց 19 տարի, 1889-ից մինչև 1907 թվականը։

Գ. ԱՆԱՆՅԱՆ

ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

1874 թ. աշնանը բացվեց Էջմիածնի Գևորգյան ճեմարանը։ Չնայած գեներալ 1869 թ. Էջմիածինը մշակել և ցարական կառավարության հաստատման համար Պետերբուրգ էր ուղարկել նոր բացվելիք ճեմարանի կանոնադրությունը, սակայն գրա վերջնական վավերացումը ձգձգվեց մինչև 1874 թ.։ Այդ տարվա սեպտեմբերի 28-ին կատարվեց ճեմարանի հանդիսավոր բացումը։

Նախատեսված էր առաջին տարում ճեմարան ընդունել 75 հոգի, որից 42-ը՝ Ռուսահայաստանից և Ռուսաստանից, 21 հոգի՝ Տաճկաստանից, 12 հոգի՝ Պարսկաստանից։ Աշակերտներ հավաքելու համար մարդիկ ուղարկվեցին թեմերը։ Ճեմարանի հիմնադիր Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսը մտադիր էր ճեմարանը ծառայեցնել եկեղեցական կադրեր պատրաստելու նպատակին։ Սակայն ճեմարանի հետագա կյանքը ցույց տվեց, որ այն զգալի չափով ծառայեց նաև հայ ժողովրդի աշխարհիկ կրթության գործին։

Հայկական դպրոցների համար հարյուրավոր ուսուցիչներ տալուց բացի, ճեմարանը հանդիսացավ հայ ժողովրդի կուլտուրական ժառանգության ուսումնասիրման և մշակման օջախներից մեկը։ Այդտեղ մանկավարժական ու գիտական աշխատանք են կատարել առաջադեմ ուսուցիչների ու գիտնականների մի բանի սերունդներ։

Ճեմարանը տակավին չէր բոլորել իր գոյության մեկ տասնամյակը, իսկ այնտեղ գործում էին այնպիսի ականավոր հայագետներ, ինչպիսիք էին Վահան Բաստամյանը, Մկրտիչ Պալյանը, Ստեփանոս Պալասանյանը, Սեդրակ Մանգինյանը և ուրիշներ։ Ինչպես այս սերնդի, այնպես էլ հետագա տասնամյակների դասախոսներից շատերը՝ Մ. Արեղյանը, Ս. Կանայանը, Վ. Սուրենյանցը, Գ. Լևոնյանը, Կ. Տեր-Մկրտչյանը, Գ. Հովսեփյանը, Մ. Օրմանյանը, Բ. Սմբատյանը, Կ. Կոստանյանը ճեմարանում իրենց կատարած աշխատանքները ծավալում էին երկու ուղղությամբ. որպես ուսուցիչներ նպաստում էին իրենց սաների աշխարհայացքի մշակմանն ու նրանցից շատերին տալիս գիտական պատրաստություն, մյուս կողմից՝ իրենց ձեռքի տակ ունենալով ճեմարանի հարուստ գրադարանը և Էջմիածնի մատենադարանը, կատարում էին գիտական ուսումնասիրություններ, նպաստելով հայագիտության տարբեր ճյուղերի մշակմանը։

Ճեմարանում առաջնությունը տրվում էր լեզուներին՝ մասնավորապես մայրենի լեզվին, դրականությանը, այլ ժողովուրդների գրականությանը, պատմության և առհասարակ հայագիտության հետ կապված առարկաների ուսուցմանը։ Հայոց լեզվի առաջին ուսուցիչներից Մկրտիչ Պալյանը քերականությունը բաժանել էր ծրագրային երկու բաժինների. առաջին և երկրորդ դասարանում նա գաղափար էր տալիս շարահյուսության և բանահյուսության մասին, իսկ երրորդ և չորրորդ դասարաններում անցնում էր սիստեմատիկ կուրս. ընդ որում, երրորդ դասարանցիների համար նա կազմել էր շարահյուսություն, տեղ տալով նաև ձևաբանությանը, իսկ չորրորդ դասարանի համար հիմնականում ծանրանում էր բանահյուսության վրա, շմոռանալով շարահյուսությունը։ Նույն դասարանում գրականության ուսուցումը կրում էր ընթերցանության բնույթ, ըստ որում որպես նյութ ծառայում էին բացառապես գրաբարյան տեքստերը[1]։

Մինչև 1890-ական թթ. պահպանվում էին ծրագրեր կազմելու նույն սկզբունքները և առանձին բեկում չէր կատարվում նաև բովանդակության մեջ։ Միակ նվաճումը, որ նկատելի էր, աշխարհաբարի պաշտոնական մուտքն էր՝ որպես առարկա։ Ճեմարանի գոյության առաջին տա-

1 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆոնդ, 312, թղթ. 32, վավ. 1, թուղթ 20։

բիներին աշխարհարարին ուղղ էր տրվում այնքանով, որ գրարարյան տեքստերը հասկանալի դառնալու համար կատարեին թարգմանություն կամ բովանդակության վերարտադրություն։ Մասնակի չափով գաղափար էր տրվում նաև բերականության տարրական հասկացողություն-ների վերաբերյալ, իսկ աշխարհիկ գրականության մասին խոսք չկար։ Հետագայում Սանուկ Արեղյանը գրաբար, աշխարհարար, ինչպես նաև հին և նոր գրականություն դասավանդելով, մեկուկես տասնամյակի ընթացքում ծրագրերը սիստեմավորելուց, դասագրքեր ստեղծելուց բացի, բերականության տեսության ուսուցումը ամրացնում էր գործնական վարժությունների միջոցով։ Արեղյանը ընթերցանության նյութ էր ծառայեցնում ժողովրդական ստեղծագործությունները, վեր հանում նրանց գեղարվեստական արժանիքները, վերլուծում բանաստեղծությունների տաղաչափությունը, գաղափար տալիս գրականության տեսության մասին։ Արեղյանի գործակիցները, ինչպես նաև նախորդ շրջանի ուսուցիչներից ոմանք, մայրենի լեզվի և գրականության դասավանդման գործում ռուսական ու եվրոպական սոսջադեմ դաղափարների ազդեցությամբ, աշակերտներին հեռու էին պահում սահմանափակ, վերացական բանաձևերից, տալիս էին ռեալ գիտելիքներ, վերլուծելով կոնկրետ երկը, լուսաբանելով դրա ստեղծման ժամանակաշրջանը և հեղինակի հայացքները։

Հայոց լեզվի և գրականության գիտական մշակումը այս շրջանում ավելի ճոխացավ լսարանական բաժնում։ Սկզբնական տարիների անհասկանալի, ճոռոմ հռետորիկան աստիճանաբար տեղի տվեց գրականության ժողովրդական իմաստի բացահայտմանը, սնամեջ քարոզները փոխարինվեցին գրական երևույթների պարզաբանությամբ, կյանքի հարցերը լուսաբանվեցին գրականության միջոցով։ Դեռևս 1886—87 ուսումնական տարում ընդհանուր գրականության դասավանդման հիմքում դրված էր, օրինակ, այսպիսի խնդիր. «Գրականության ծագումը և նորա պատմական հիմունքները»[2], իսկ 1898—99 ուսումնական տարվա Iև լսարանի գրականության տեսության ծրագրում Մ. Արեղյանը արվեստի տեսակների զարգացման, նրանց փոխհարաբերությունների մասին խոսելիս գրել է. «Նոցա ներգործությունները մարդկանց վերա. ինչ էսթետիկական գաղափարի և էսթետիկայի փոխազդեցությունը, բանաստեղծության նշանակությունը քաղաքակրթության գործում»[3]։ Մրագրից երևում է, որ «Արվեստը արվեստի համար» տեսությունը արդեն խորթանում էր թե՛ ուսուցիչների և թե՛ ուսանողների համար։ Մինչև XIX դ. 80—90-ական թթ. լսարաններում գրականության տեսության մասին խոսք չկար, ընդհանուր գրականության դասընթացում բավականանում էին «ուսումն Ս. գրոց» կամ «գրնություն Ս. գրոց» ուսուցմամբ։ Ընդհանուր գրականության դասընթացը պտտվում էր հունական, չինական, ասորական, երբայեցոց, և առհասարակ հին և նոր ժողովուրդների գրական նմուշների շուրջը։ Դրանք հետաքրքրություն էին ներկայացնում դիցաբանության կամ աստվածաբանության տեսանկյուններից միայն։ Բայց սկսած 1890-ական թթ. վերջերից, հանձինս Հովհաննես Հովհաննիսյանի, Արեղյանի, Մանգինյանի, ինչպես և Խոստիկյանի, Մալխասյանի, Ղափանցյանի, Լեոնյանի և ուրիշների, գրականության պատմության և արվեստների ուսուցումը ստանում է գիտական բնույթ։ Նույն Իսրայելի գրականության ծրագրերից մեկի մեջ Մ. Արեղյանը գրել է. «Հին փիլիսոփայական դպրոցների ազդեցությունը գրականության վրա. Հոռետես մտքը, տիեզերական վիշտ, ժամանակի հակասական բնավորությունը։ Սոդոմոնը իբրև հեղինակ, երկերի տեսակները, հարսանեկան երգեր, այլաբանություններ»[4]։

Ճեմարանի հունական գրականության առաջին ուսուցիչ, բանաստեղծ Հ. Հովհաննիսյանը իր կազմած ծրագիրն սկսել է՝ նշելով հունական գրականության նշանակությունը, նրա գերը Եվրոպական և մյուս ազգերի գրականության զարգացման գործում, կանգ առել հին հույների աշխարհայացքի վերլուծության, քաղաքակրթության, ինչպես նաև դրամայի, կատակերգության ծագման և նման այլ խնդիրների վրա։ Նրա կազմած ծրագրում տեղ են գտել վիպասանության, բնաբերգության, էլեգիայի, բանաստեղծական տարբեր տեսակների ու ժանրերի ներկայացուցիչները։

Շիրակյան ճեմարանում գլխավոր տեղ էր տրվում օտար լեզուների ուսուցմանը և հատկապես ռուսաց լեզվին։ Պյուրեղ վարդապետ Սրապյանը, Վարդան Աբովյանը, Լևոն Մանվելյանը ճեմարանում ռուսաց լեզու դասավանդեցին մոտ 25 տարվա ընթացքում։ Հովհաննիսյանը նրանցից հետո դասավանդեց երկու տասնամյակից ավելի և ռուսաց լեզվի ուսուցման որակը հասցրեց բարձր աստիճանի։

---

2 Նույն տեղում, թղթ. 22, վավ. 42, թուղթ 114։
3 Նույն տեղում։
4 Նույն տեղում, թղթ. 3, վավ. 1, թուղթ 76։

Ճեմարանի ուսումնական պլանների և ծրագրերի մեջ առանձին տեղ են գրավում աշակերտներին արվեստի ճյուղերին ծանոթացնելու, նրանցից ունակներից արվեստի մշակներ պատրաստելու խնդիրները։ Դասավանդվել են երգ-երաժշտություն, նկարչություն, գեղագրություն-գծագրություն։ Առաջինն ընդգրկել է հայ երաժշտության ակունքները, եկեղեցական երաժշտության գիտական բացատրությունները, ժողովրդական երգերը և ժամանակակից եվրոպական երաժշտությունը։ Երկրորդը նպաստել է նկարելու ունակությունների զարգացմանը և կլասիկ ու ժամանակակից նկարները ճանաչելու տեսական պատրաստություն տվել։ Երրորդն ունեցել է երկու բաժին. մեկը վերաբերել է գեղեցիկ ձեռագրերի մշակմանը, հայ գրչության արվեստի ըմբռնմանը, մյուսն ունեցել է ճարտարապետական բնույթ և կապված է եղել ազգային ու համաշխարհային կառուցումների ուսումնասիրության հետ։

1873 թ. էջմիածին հրավիրված Նիկողայոս Թաշճյանը, ոգևորական վերցնելով Սակար Եկմալյանին, ձայնագրեց հայկական շարականները ու պատարագի որոշ մասերը։ Ճեմարանում երաժշտությունը դրվեց հիմնական առարկաների շարքում, սակայն ձայնագրության մասին գաղափար էր տրվում տարրական չափով։ Սոսկ եկեղեցական սահմանափակ ձայն-եղանակների ուսուցումը շարունակվեց մինչև 1893—1894 ուսումնական տարին, երբ հանդես եկավ մեծատաղանդ Կոմիտասը։ Նա առաջինն էր, որ դպրոցական ծրագրերում ուսումնական նյութ դարձրեց նաև եվրոպական ձայնագրությունը և հայ ժողովրդական երգն ու երաժշտությունը։ Դասերի ընթացքում և արտադասարանական պայմաններում նա սովորեցնում էր քառաձայն երգեր։ Աշակերտները ձայնագրում էին ազգային ու ժողովրդական երգեր, սովորում եվրոպական ձայնագրություն։ Գերմանիայում կատարելագործվելուց հետո էջմիածին վերադառնալով իբրև խոշոր մասնագետ, Կոմիտասն իր բազմաթիվ ու բազմապիսի մշակումների և ուսումնասիրությունների հետ միասին ճեմարան բերեց երաժշտության ուսուցման նոր, թարմ ու կատարելագործված սիստեմ, բովանդակությամբ հարուստ ծրագրեր։ Գերազանցելով իր նախորդներին և անգամ ինքն իրեն։ Նրա ձեռքի տակ աճեցին երաժշտությունը, հատկապես հայ երաժշտությունը բազմաթիվ շատ աշակերտներ, որոնցից ընտրյալները դարձան հայ երաժշտության անխոնջ մշակներ։ Նրա սաներից Սպիրիդոն Մելիքյանը նույն ճեմարանում, ինչպես նաև Ներսիսյան դպրոցում աշխատելիս, արմատացնում էր Կոմիտասի երաժշտական ավանդները։

Երաժշտության համեմատությամբ նկարչության, գծագրության և վայելչագրության ծրագրերը չունեն նույն հարուստ բովանդակությունն ու ուսուցման որակը, բայց եղածը այնքան է, որ կարելի է համարձակ ասել, թե նրանք ևս արժանի են ուշադրության։ Սրանց դասավանդման գործում առաջին դժվարությունը պատրաստված ուսուցիչներ ունենալու խնդիրն էր։ Եթե երաժշտության հարցում նույն դժվարությունը հաղթահարելի էր, որովհետև մասնագետներ պատրաստելու խնդիրը միշտ գտնվել է հոգևոր իշխանության ուշադրության կենտրոնում, ապա նկարչության և գծագրության համար մասնագետներ ունենալը նրանց քիչ է հետաքրքրել։ 1890-ական թթ. փոխվեց այս առարկաների, հատկապես նկարչության դասավանդման վիճակն ու ծրագրերի բովանդակությունը, երբ որպես նկարչության ուսուցիչ հրավիրվեց Վարդգես Սուրենյանցը, որի մուտքը ճեմարան նկարչության դասավանդումը բարձրացրեց մի նոր աստիճանի։ Նկարելու կարողություններից զատ, նա աշակերտներին տալիս էր նաև տեսական գիտելիքներ։ Սակայն Սուրեն-անցն աշխատեց ընդամենը մեկ տարի և չկարողացավ ստեղծել ուսուցման կայուն սիստեմ։ Նկարչության, գծագրության և վայելչագրության դասավանդումը նորմալ հունի մեջ մտավ 1900-ական թթ., երբ որպես ուսուցիչ հրավիրվեց Գարեգին Լևոնյանը։ Հետևելով ռուսական ու եվրոպական դպրոցների օրինակներին, նա ստեղծեց դասավանդման կուռ սիստեմ։ Այս առարկաների համար կազմած ծրագրերը, ուսուցչի պատրաստականության մասին վկայելուց բացի լույս են տալիս աշակերտներին հաղորդվող գիտելիքների չափը։ Վայելչագրության ծրագրի մեջ Լևոնյանը կրկնության կարգով տեղ է տվել կանոնավոր և վայելուչ գրելուն, տառերը մազաթելերով միացնելու, ամբողջական բառեր գրելու ձևին։ Այնուհետև դրել է շքեղ գրելու խնդիրը՝ անդրադառնալով շեղագիր և բոլորգիր ձեռագրերի մշակմանը։ Վայելչագրություն ուսուցանելիս նա չի սահմանափակվել հայոց լեզվով, այլ գաղափար է տվել ճեմարանում դասավանդվող ռուսաց լեզվի, ֆրանսերենի և գերմաներենի վայելչագրության մասին։ Վայելչագրությունը հարակից համարելով նկարչությանն ու գծագրությանը, նա դասավանդել է նաև այս առարկաները։ Լևոնյանի ստեղծած ծրագրերը և դասընթացը մնացին անգերազանցելի ճեմարանի գոյության ամբողջ ընթացքում։

Գևորգյան ճեմարանը հանդիսացավ հայ առաջին ուսումնական հաստատությունը, ուր գիտական հիմունքներով դասավանդվել են նաև մանկավարժական առարկաները։ Ուսուցման գուգակցումը գիտական աշխատանքներին հնարավորություն էր տալիս լուրջ եզրակացություն-

ների հանգել մանուկների հոգերանության ուսումնասիրման, ուսուցման որակի, ինչպես նաև առարկաների դասավանդման մեթոդիկայի վերաբերյալ։ Գործնականի ու տեսականի լաբորատորիա հանդիսացավ վարժոցը, որը հիմնադրվեց Ս. Մանգինյանի կողմից։ 1881—1883 և հետագա ուսումնական տարիներում լսարանական բաժնում մանկավարժությունը դասավանդվել է եվրոպական և ռուսական մանկագիտական համալսարանների ծրագրերին համազոր դասընթացով։

Ճեմարանի մանկավարժության ուսուցիչ Ս. Մանգինյանը ստեղծեց մանկավարժության գիդակտիկայի, հոգերանության, անգամ մասնավոր մեթոդիկաների և տրամաբանության ծրագրեր, որոնք կրում են Հերբարտի մանկավարժական դպրոցի կնիքը։ Մանգինյանի մանկավարժական գաղափարների, կրթության ու դաստիարակության վերաբերյալ նրա ունեցած հայացքների փաստական վկաները այն ծրագրերն են, որ նա կազմել է ճեմարանի լսարանական բաժնի համար։ Դեռևս 1884—1885 ուսումնական տարում նա կազմել է մի ծրագիր, որից երևում է, որ նա ուսանողների միտքն ուղղում էր դեպի հոգերանական, տրամաբանական և երբեմն էլ վերացական դատողությունները, միախառնելով փիլիսոփայական ու հոգերանական դիսցիպլինները։

Մանկավարժությունն աչքի ընկնող ուսուցիչներ էին նաև Քարամյանը, Օլթեցյանը, Շավարշյանը և հատկապես Էդիլյանը։ Վերջինս ճեմարանում աշխատելու առաջին օրվանից (1910 թ. սեպտեմբեր) ձեռնամուխ եղավ Մանգինյանի հիմնած վարժոցի վերականգնման աշխատանքներին, վարժոց, որը հսկայական դեր խաղաց ուսանողներին պրակտիկ մանկավարժական ու մեթոդական գիտելիքներ տալու գործում։ Էդիլյանը Մանգինյանի նման գտնում էր, որ առանց պրակտիկ վարժությունների անհնար է պատրաստել որակյալ ուսուցիչներ։ Նա հայ մանկավարժներից առաջինն էր, որ առանձին տեղ էր տալիս փորձնական (էքսպերիմենտալ) հոգերանության։ 1910 Ս. լսարանական բաժնի համար կազմած ծրագրի մեջ նա դրել է. «Մանկավարժությունը իբրև գիտություն և արվեստ. նրա հիմունքներ կազմող գիտություններն են՝ հոգերանություն, տրամաբանություն, մանկավարժության մեթոդները և էքսպերիմենտալ հոգերանություն»5։

* * *

Տարիների ընթացքում Գևորգյան ճեմարանը դարձավ հայ մտավորական կադրերի պատրաստման կրթարան։ Այսպես՝ ճեմարանի առաջին ուսուցիչներից Վահան Բասսամյանը իր հիմնական խնդիրը դարձրեց «Դպրոց» մանկավարժական ամսագրի խմբագրման և Մխիթար Գոշը «Դասատանագրքի» ուսումնասիրության ու հրատարակման գործը։ Մկրտիչ Պալյանը դասերի հետ միաժամանակ զբաղվում էր մեր գողթան երգերի տաղաչափության ուսումնասիրությամբ։ Նա հայտնագործեց գողթան երգերի և հայկական բազմավանկ չափերի նմանությունը։ Այս շրջանի բեղմնավոր գիտնականներից էր Ս. Պալասանյանը։ Նրա ձեռքի տակ կրթվեցին Մ. Արեղյանը, Գ. Տեր-Մկրտչյանը, Ս. Մալխասյանցը, Կ. Տեր-Մկրտչյանը, Գ. Հովսեփյանը և այլ նշանավոր գիտնականներ։ Պրակտիկ մանկավարժական աշխատանքները զուգակցելով գիտական պրպտումներին, Պալասանյանը գրեց հայոց պատմության ամբողջական դասագիրքը, գրաբարի քերականության ձեռնարկը, «Բանավոր գրականությունը»։ Թղթակցելով հայ պարբերականներին, նա հրատարակեց մի շարք արժեքավոր ուսումնասիրություններ։ XX դ. առաջին տասնամյակում սկսեց գիտական և մանկավարժական արժեքավոր աշխատանք կատարել Կ. Կոստանյանը։ Նրա դասախոսությունները ու գիտական մեկնաբանությունները կրում էին պահպանողականության խոր կնիք, բայց նա առաջիններից մեկն էր, որ բազմակողմանի հետազոտության ենթարկեց հայ միջնադարյան բանաստեղծությունը և հանդիսացավ շատ տաղերգուների հայտնագործող։ Նա իր հետազոտություններով ու հրատարակություններով զգալի չափով օգնեց հայագիտության զարգացմանը։

1880-ական թթ. վերջերին և 1890-ական թթ. արտասահմանում կատարելագործվելուց հետո ճեմարան հրավիրվեցին նախկին ուսանողներ Մ. Արեղյանը, Գ. Հովսեփյանը, Կ. Տեր-Մկրտչյանը, Կոմիտասը։ Նույն թվականներին ճեմարանում աշխատում էին նաև Հովհաննես Հովհաննիսյանը, Ստ. Կանայանը, Սեդրակ Մանգինյանը և ուրիշներ։ Դասախոսական կազմի հին ու նոր անդամները մանկավարժական քննչական աշխատանք կատարելուց բացի, իրենց ուժերը նվիրաբերեցին հայագիտության զարգացման գործին։

---

5 Նույն տեղում. թղթ. 34. վավ. 7. թուղթ 117։

Հայագիտությունը ճեմարանում մի կլիով վեր կանգնեց, երբ նրանով զբաղվեց և հիմնատան առարկաների դասավանդումը իր ձեռքն առավ Մ. Արեղյանը։ Հայագետների մի բանի սերունդ դաստիարակելու հետ միասին նա կատարեց բանասիրական բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք մեծ ավանդ էին հայագիտության մեջ։

Հայագիտության զարգացումը շարունակվեց նաև ճեմարանի գոյության վերջին տարիներին։ 1914—1915 ուսումնական տարվանից այնտեղ պաշտոնավարում էին Աշոտ Հովհաննիսյանը, Ավետիք Տեր-Պողոսյանը, Պողոս Մակինցյանը, Ստեփան Մալխասյանցը և ուրիշներ։ Նրանցից Հատկապես Աշոտ Հովհաննիսյանը և Պ. Մակինցյանը դասավանդման ընթացքում վեր էին հանում պատմական անցյալի իդեալիստական մեկնաբանման արատավոր կողմերը և ցույց տալիս հասարակության սոցիալ-դասակարգային առանձնահատկությունները, դասակարգերի մեջ գոյացած անդունդը և յասակարգային երկու տարբեր կուլտուրաների հակամարտությունը։ Ահա թե ինչ. Հովհաննիսյանը 1916—1917 ուսումնական տարվա իր կազմած ծրագրերի հիմքում ինչն է դրել. «Նախնական կոմունիզմ. ուսումնասիրության աղբյուրները. նախնական մարդկության տեխնիկան. գոյության կռիվն այս շրջանում. հավելյալ աշխատանքի բացակայությունը այս շրջանում. նախնական մարդկության հասարակական դիֆերենցիացիայի հարցերը և դրանց բացակայությունը, հասարակական մտայնության ծագումն ու զարգացումը»[6] և այլն։ Այս շրջանում պատմության և մասնավորապես հայագիտության դասավանդումը մտավ զարգացման նոր փուլի մեջ։ Նոր դասախոսները ցույց էին տալիս, որ հայ ժողովրդի կուլտուրան, նրա կրած ու թողած ազդեցությունները պետք է դիտել և ընդել հասարակական զարգացման պրոգրեսիվ ընթացքի մեջ։ Գիտական դասախոսների վերջին սերունդը չէր սահմանափակվում հեռավոր անցյալի քննությամբ, անդրադառնում էր նաև հայ ժողովրդի պատմության մոտիկ ու ժամանակակից հարցերին։

Ճեմարանի գոյության վերջին տարիներին այնտեղ ուսանել են նաև Ա. Միկոյանը, Լ. Մխչյանը, Ա. Խանջյանը, Ե. Մկրտումյանը, Հ. Կոստանյանը, Ս. Դանիելյանը, Ա. Ստամբոլցյանը և այլ նշանավոր դեմքեր։

1916 թ. դեկտեմբերի 20-ին ճեմարանում ստեղծվում է ազգագրական գիտական հանձնաժողով, որը պիտի ունենար նաև իր հրատարակությունը։ Հանձնաժողովի նախագահ է ընտրվում Գ. Հովսեփյանը, քարտուղար՝ Աշոտ Հովհաննիսյանը, անդամներ՝ Լևոն Գյանջեցյանը, Սենեքերիմ Տեր-Հակոբյանը, Գր. Զափանցյանը և ուրիշներ։ Հանձնաժողովը հիմնադրում է նաև ազգագրական հանդես։ Հանդեսի առաջին համարը որոշված էր նվիրել տաճկահայաստանցիների վերջին ՃԼԵ գաղթի հետ կապված նյութերի ուսումնասիրությանը։ Հիշյալ նպատակով որոշակի թեմաների մշակման համար հրավիրված էին Թ. Թորամանյանը, Լևոն Մսերյանը, Արսեն Ղրլտճյանը, Գաբրիել Տեր-Մկրտչյանը և ուրիշներ։ Խնդիր էր դրված լուսաբանել Տաճկահայաստանի տնտեսության, ճարտարապետության, արվեստի մի շարք հարցեր, ուսումնասիրել ժողովրդի սովորությունները, տարազը, արհեստները, կենցաղը, ավանդությունները, ժողովրդական ստեղծագործությունը և այլն։ Այս աշխատանքները, սակայն, մնացին անավարտ, որովհետև 1917 թ. դեկտեմբերի 21-ին ճեմարանը փակվեց։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց անմիջապես հետո Երևանում հիմնադրվեց Պետական համալսարանը, որի առաջին դասախոսների թվում էին Գեորգյան ճեմարանի նախկին ուսուցիչներից շատերը։

Մ. ԳԱՄԲԱՐՅԱՆ

ԼԵՀԱՍՏԱՆԻ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻՆԵՐԸ XVI—XVII ԴԱՐԵՐՈՒՄ

Լեհաստանի հայերի քաղաքական իրավունքներից առավել կարևորը ինքնավարության իրավունքն էր, որից նրանք ոգտվեցին սկսած Գալիցիա-Վոլինյան իշխանության ժամանակաշրջանից մինչև XVIII դարի վերջը, այսինքն՝ մինչև Լեհ Պոսպոլիտայի անկումը։

Միջնադարյան Լեհաստանում ինքնավարության իրավունքը արվում էր քաղաքատեր-ֆեոդալի կողմից՝ նրա տիրապետության սահմաններում գտնվող յուրաքանչյուր առանձին քաղաքի համար։ Այդ պատճառով էլ ֆեոդալական մասնատվածության պայմաններում իրար չէր կարող լինել կենտրոնացված և միասնական ինքնավարության մասին։ Նույն ձևով էլ յուրաքան-

---

6 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆոնդ 217, թղթ. 54, ցուցակ. 16, թերթ 71։